Ռուբեն Սևակ

Երգ երգոց

Երա՞զ, տեսի՞լ, անգո ստվե՞ր մ’անհոգի,
Ճառագայթի, փրփուրի խա՞ղ մը տարտամ:
Քմայապաշտ ծաղի՛կ մ’արդյոք ցընորքի,
Քու մշուշոտ գիծերուդ ի՛նչ անուն տամ.
Երա՞զ. տեսի՞լ, անգո ստվե՞ր մ’անհոգի:

Քու կապույտիդ վճիտ, աղվոր ջուրերու
Եթերային անրջանքին է հանգույն.
Ու քու կարմի՛րդ Պենկալյան վարդերու
Երազամած կարմրրության պես տժգույն.
Գոգն աչերուդ կապույտն ունիս ջուրերու:

Արցունքիդ պես նայադներ պար կը դառնան:
Այդ ի՞նչ հեշտանք որ շրթներուդ մեջ կը’մպես.
Շունչդ գինով է հովերու պես գարնան,
Ձայնդ տարփոտ՝ աղբյուրներու երգին պես…
Արցունքիդ մեջ նայադներ պար կը դառնան:

Կը հմայեն զիս քու աչերդ, կը շոյե՛ն,
ՈՒ մարմինդ ծորող խունկը մեղավո՛ր,
Ավելի քաղցր է Քանանու գինիեն…
Հազարբուրյան այս պատարա՞գն է աղվոր,
Թե լո՛ւյծ աչերդ որ մութ հոգիս կը շոյեն:

Հրաշագո՞հ, քու անդրիդ բյուրեղե.
Սրունքներուդ սարսռացող ձյունն հրաշեկ,
ՈՒ անանո՞ւն ցոլքը որ քեզ կողողե,
Մորթիդ թաքուն գանգուրներուն խուրձը շեկ…
Հրաշագո՛… ո՞հ, քու իրանդ բյուրեղե:

Տենչերուս վրա պիտի հսկեմ այս գիշեր
Որ բազուկնե՞րըս չը փընտռեն քեզ իմ քով,
Սիրտս ո՞ւր էր որ կուրծքեդ ոչինչ չը հիշեր,
Մինչև առտու պիտի հալեր արցունքով…
Կիրքերուս վրա պիտի հսկեմ այս գիշեր:

Իզո՞ւր: Հոգիս թաղվել կուզե հուլորեն
Ստինքներուդ մտերմությանը մեջ կույս.
Ու անութիդ որոշ ծալքերը նորեն
Գիտեմ որ զիս պիտի տանջեն մինչև լույս…
Քու մե՛ջդ հոգիս թաղվել կուզե հուլորեն:
Տժգույն աղջի՛կ, հյուսիսայգի աչքերով,
Կոպերուդ վրա ու բիբերուդ մեջ խոնավ
Այդ ի՞նչ անճառ երանություն, ի՞նչ գորով…
Ո՛չ մեկ արգանդ քե՞զ պես հրաշք չը ծնավ,
Տժգո՞ւյն աղջիկ, հյուսիսայգի աչքերով: